

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлис, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանչիւր տոկոսներին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՌՆԻ

Վշտահար Վարվարա Յովհաննիսեան Աւագեան, Շողակաթ Յակոբեան և Մկրտիչ Աւագեան Աւագեանները՝ դուստրներով, փեսաներով և եկատերինա Աւագեան Տէր-Յովսէփեան խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինը թանկագին ամուսնու, երկրորդը՝ որդու, երրորդը՝ եղբոր և աներորդու և չորրորդը՝ փեսայի, երգուհայ հաւատարմատար:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԵԱՆ ԱՒԱԳԵԱՆՏԻ

Մահման մասին: Մարմնի յուղարկւորութիւնը շաբաթ, ապրիլի 2-ին, առաւօտեան 10 ժամին Սարիքի տնից Բերուսովսկայա փողոցի վրա (Նախկին Սաղօվայա) № 46 Սուրբ-Միքայիլ եկեղեցում (Հաւաքարում), իսկ այնտեղից դէպի Սօլիկանքի գերեզմանատուն: Ամբիճը ուրբաթ երեկոյեան 7 ժամին:

ԲՈՎԱՆԻՍԿՈՒԹԻՒՆ

Տեղական ինքնավարութեան հարցը.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական հաղորդա-
րութիւն. Բազուի ազգային դպրոցի օգտին. Հ.
Կովտասի կոնցերտի առիթով. Թատրոն և ե-
րաժշտութիւն. Նամակ Գանձակից. Նամակ
Կարսից. Նամակ Գեօղիայից. Նամակ Խմբագ-
րութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Մենք ասացինք, որ հերթական է դառ-
նում մեր երկրի համար տեղական ինք-
նավարութեան հարցը: Այն բոլոր պա-
հանջները, որոնք կրում են «գեմակի»
անունը, մինչև այժմ հնթարկվում էին
վարչական մարմինների բարենայեցողու-
թեան: Մեր երկիրը տալիս է իւրաքան-
չիւր տարի գեմակի հարկ, որով պէտք է
հոգացվեն տեղական այնպիսի պահանջ-
ներ, ինչպէս են բժշկական օգնութիւնը,
հաղորդակցութիւնը, կամուրջները, մա-
սաժի կրթարանները և ուրիշ կարիքներ:

Սակայն մեր ազգաբնակչութիւնը, տա-
լով այդ հարկը, ինքը չէ կարգադրում
այդ հարկի գործադրութիւնը և ինքը չէ
վերահսկում ծախսարարութեան վրա:
Իւրաքանչիւր տարի նահանգապետները
ժողովում են Թիֆլիսում, քննութեան
ենթարկում «գեմակի» կոչված կարիք-
ները և ընդհանուր համաձայնութեամբ
կարգադրում այն գումարները, որոնք
նշանակված են այդ կարիքներին բաւա-
րարութեան համար: Անկասկած՝ գործը
աւելի նպատակայարար ձև կընդունի
եթե տեղական ազգաբնակչութիւնը, որ
աւելի ծանօթ է տեղական հանգամանք-
ներին, կարողութիւն կը ստանայ իր
ընտրեալների միջոցով թէ խօսել տեղա-
կան կարիքների մասին, թէ քննել առ-
պարէզ եղած ծրագրերը, թէ կարգա-
դրել գումարները և թէ հսկել այդ
գումարների գործադրութեան վրա:

Ասան տեղ, ուր տեղական ազգաբնա-
կչութիւնը հրաւիրվել է ինքնագործու-
թեան, ուր նա ինքն է հանդէս եկել իր
կարիքների մասին խօսելու և նրանց
բաւարարութիւն տալու համար, շատ
շուտով նկատվել է կեանքի մէջ զգալի ա-
ռաջագիմութիւն: Երբ ազգաբնակչութիւնը
համոզված է, որ մի որոշ կարիքի նա
պէտք է բաւարարութիւն տայ, նա ինքը
ամեն ջանք ու աշխատանք գործ է
դնում գտնելու միջոցներ իր նպատակին
հասնելու համար: Այդ ժամանակ նա
դուրս է բերում իր միջից բազմաթիւ
անձնուէր և ոգևորված անձնաւորութիւն-
ներ, որոնք ամեն եռանդով իրանց նուի-
րում են երկրի բարօրութեան համար գոր-
ծելու գործը, ոչ իրանց անձնական
շահերից, այլ քաջալերված այն բարեք-
ներէն, որ նրանք կառաջացնեն կեանքի
մէջ:

Տեղական ազգաբնակչութեան ներկա-
յացուցիչները՝ ժողովված միասին, ան-
շուշտ, բաւարար լուծում կը տան շատ

խոշոր և էական հարցերի, որոնք տարի-
ներ շարունակ մնում են հրապարակի
վրա: Այդպիսի խոշոր հարցերի շարքում
են օրինակ ընդհանուր կրթութեան, բը-
ժշկական-առողջապահական և հաղորդակ-
ցութեան բարելոման պահանջները մեր
երկրում, որոնք մինչև այժմ շատ ան-
միտիւթարական վիճակի մէջ են և մեծ
աղքէտ են հանդիսանում մեր երկրի ու
ժողովրդի առաջադիմութեան:

Այսպէս հանդէս է գալիս սակայն մի
հարց այն է հիմնական վարչական շրջանի
այն ինքնավարական կորիզի մասին, որ
պէտք է, թէ երկրի ազգաբնակչութեանը
շատ մօտ լինի և թէ կարողանայ երկրի
շահերի ներկայացուցչութիւն կազմել:
Դա գաւառական ինքնավարական շրջ-
անն է, որից պէտք է բղխեն նա-
հանգական և համայնքային կառավար-
կայացուցչութիւններ լրացնելու գեմակու-
կազմակերպութեան շինութիւնը հոյակապ
կերպով:

Մենք կը վերադառնանք այս խնդրին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՂԱՌՈՒԹԻՒՆ («ԲԱՅԱՅ» լրագրից)

Առաջին գործարածի հետ Օդուրգետի գա-
ւառը ուղարկված գեներալ-մայոր Ալիխանով
գեկուցանում է, որ գուրիական շարժման պա-
րագլուխներին բռնելուց և արքայից յետոյ,
գրութիւնը Գուրիայում փորվել է: Ազգաբնա-
կչութիւնը սկսել է ճշգրտութեամբ կատարել պար-
տադիր կազմակերպութիւնները և անտրուշ
վճարել հարկերը: Ոստիկանութիւնը, որ դա-
սալիք էր դաժան, նորից սկսել է կատարել
իր պարտականութիւնները, իսկ այժմ գե-
ղական վարչութիւնների փոխարէն շինվում
են նոր բարոկի տներ: Գեներալ-մայոր Ալի-
խանովի և զօրաբանի գալու օրից Օդուր-
գետի գաւառում կարգը խանգարելու մի դէպք
անգամ չէ եղել:

Մարտի 20-ին և 21-ին Անդրկովկասեան
երկաթուղու Ալեքսանդրով Դարբերիսա շրջ-
անի երեք բաժիններում, գծի բոլոր ծառայող-
ները, դադարեցնելով աշխատանքը, սկսեցին
խմբով հաւաքվել բաժինների գրասենյակ-
ների մօտ, պահանջելով ոռձիկի աւելացում և
բանաւորական ժամերի պակասացում, իսկ Ա-
լեքսանդրով կայարանում բացի դրանից,
կարկառու բանաւորների խումբը սպանաւոր-
ների տակ դադարեցրեց աշխատանքները դէ-
պոի մէջ, ուր հետեւել օրերը աշխատանքները
վերսկսեցին միայն շնորհիւ ուղարկված գե-
ներալի մօտ, որ դրված է ամբողջ գծի վրա
Թիֆլիսից մինչև Երևան: Իսկ ճանապարհի
վրա ծառայողները աշխատում են մասամբ
միայն Երևանի շրջանում, ուր նրանց մեծա-
մասնութիւնը բաղկացած է մահադականնե-
րից: Ձեռքի տակ եղած տեղեկութիւններից
երևում է, որ գործադուր անելու գործում են
գլխավորապէս վրացի ծառայողները, որոնց
յօժարութեամբ միանում են նա ծառայողնե-
րը, իսկ մնացածները չեն դուրս գալիս աշ-
խատելու, լոկ վրէժի երկիւղ կրելով վրացի-

ների կողմից: Մահադականները գործադու-
րների բողոքով չեն մասնակցում:

Մարտի 22-ի գիշերը Երևանի գծի վրա
եղան փորձեր մարդատար գնացքները խոր-
տակելու, երկու տեղ փչացնելով ճանապար-
հը, սակայն այդ բանը ժամանակին երևան
հանվեց և դժբախտութիւններ առաջն առն-
վեց: Նոյն գիշերը, նոյն գծի երկու տեղերում
անյայտ չարամիտներ կոտորեցին բոլոր հե-
ռագրական թիւերը, որոնք առաւօտեան ժամի
8 ժամ վերանորոգվեցին և հեռագրական
հաղորդակցութիւնը վերականգնվեց: Ըստ ե-
րեւթիւն, ճանապարհի և հեռագրի այս բոլոր
չարամիտ փչացումները գործադուր անողների
ձեռքի բանն է:

Իժմաբան դէպքերի առաջն առնելու համար
կարգադրութիւն է արված, որ առ ժամանակ
մինչև փոփոխութիւնը, պատասխան, գեներա-
կան և ապրանքատար գնացքները ամբողջ
գծի վրա, Թիֆլիսից մինչև Երևան, գիշերները
բոլորովին երթեկութիւն չունենան:

ԲԱՅՈՒԹԻ ԱՂԵՏԻ ՁՈՋՆԵՐԻ ՕՂՏԻՆ

Ստացանք. 1) Արդուրից, Դեմիւրչեանի մի-
ջոցով հաւաքած՝ կանանցից 15 ռ. 27 կ., աղ-
ղաւարդականցից՝ 81 ռ. 10 կ., 2) Ս. Յարու-
թիւնեանից (Անդիսի) 2 ռ. 85 կ., 3) Օ-
դեսայից 4. Մանկիկեանի միջոցով 1051 ռ.,
4) Ալեքսանդրովի մատակարար մի խումբ
հայ օրորդների շրջանում 2. Մամիկոնեանի,
Ծ. Ասլանեանի և Ծ. Անայեանի միջոցով ըն-
տանական շրջանում հաւաքած 16 ռ., 5) Գե-
րից տիկին Ծ. Անայեանի միջոցով ընտանե-
կան շրջանում հաւաքած 45 ռ., 6) Բոստովից
(Դոնի վրա) Արամ Պողոսեանի միջոցով հա-
ւաքած 48 ռ. 20 կ., 7) Եւստակից Են. Նա-
զարեանի ձեռքով հաւաքած 26 ռ. 28 կ., 8)
Բնագանից 2 արտովածներից և Մէլիք Բա-
րայեանից 6 ռ., 9) Ալեքսանդրովից Մ.
Սարգսեանի, 4. Սիւրախեանի և 2. Իւրա-
շեանի ձեռքով հանգանակած 2 փոքրիկ խն-
ջոյրներում 9 ռ. 36 կ., 10) Եկատերինովա-
րից օր. օր. Աւետիսեանների ձեռքով հանգա-
նակած 55 ռ. 55 կ., 11) Վաղարշապատի օ-
րորդաց դպրոցի աշակերտուհիներից և հո-
գեմագետի ժամանակ հանգանակած 12 ռ.
60 կ., 12) Ռուշանայէն գիւղի (Դեմիւրչի
գաւառ) հաւարակութիւնից Մկրտիչ քահ.՝
Տէր-Ստեփանեանի ձեռքով հանգանակած 23
ռ. 65 կ., 13) Ալեքսանդրովից Բ. Յովսէ-
փեանի միջոցով հաւաքած 75 ռ., 14) Ոսկի
Արամեանից (Սասով-Բար) 5 ռ., 15) Կա-
խից 4. Յովսէփեանի և Կ. Ստեփանեանի
միջոցով 24 ռ. 70 կ., 16) Կարապետ Աղա-
յանից (Օմակ) 10 ռ., 17) Բօրիս-Մաչին գիւ-
ղից. Գր. Աղայեանի ձեռքով հոգեհանգստի
ժամանակ հաւաքած 13 ռ., 55 կ., 18) Թիֆ-
լիսի ժողովարանի անդամներից (առանց դա-
ւանաւոր խորութեան) 250 ռ., 19) Միլիտո-
պօլի հայ կանանցից օր. օր. Վ. Արութեանի և
Հո. Մատինեանի նախաձեռնութեամբ 64 ռ.,
20) Ալեքսանդրովի քաղաքային կար ու ձևի
դպրոցի վարժուհիներից և աշակերտուհինե-
րից 13 ռ. 50 կ.: Ընդհանուր գումարը նախ-
կին ստացածների հետ միասին 25,129 ռուբլի
94 կոպէկ:

Հ. ԿՈՄԻՏԱՍԻ ԿՈՆՏԵՆՏԻ ԱՌԻԹՈՎ

Ուրբաթ, ապրիլի 1-ին, Արտիստական ըն-
կերութեան դահլիճում կայանալու է Կոմիտաս
վարդապետի ազգային համերգը, բաղկացած
եկեղեցական և ժողովրդական երգերից: Բոլոր
երգերը ներդաշնակել է ինքը, Կոմիտաս վար-
դապետը, իսկ երգեցիկ խումբը, բաղկա-
ցած է 60 հոգուց, որոնք էջմիածնի ձեռնա-
րանի սաներն են և Կոմիտաս վարդապետի
աշակերտները:

Կոմիտաս վարդապետը, ձեռնարանի նախկին
սաներից, եւրօպական ճանապարհորդին է թէ-
րիա նախապէս սովորել է հանգուցեալ Մ. Եկ-
եղեցեանից, ապա Եւրօպա գնալով՝ Բերլինում
ուսումնասիրել է երաժշտութեան թէօրիան:
Ուսումնաւորութեան յետոյ վերադարձել է
էջմիածին և ամբողջապէս նուիրվել իր սիրած
արուեստին: Ձեռնարանում ճանապարհորդին ա-
ւանդելով՝ նա պատրաստել է մի օրինակելի
երգեցիկ խումբ, որ լաւագոյնն է մինչև այժմ

եղած բոլոր հայկական խմբի մէջ, և միա-
ժամանակ ներդաշնակել է բաղաժիւր հայ
ժողովրդական և եկեղեցական երգեր, ինչպէս
նաև ներդաշնակել է և ամբողջ պատարագը:
Նա սիրահար է իր արուեստին և միացնում
է իր մէջ մեր երկու երաժիշտները—Եկեղե-
ցեանի և Կարա-Մուրզայի—լաւագոյն յատկու-
թիւնները—գիտութիւն և եռանդ: Ինքն էլ
անձամբ լաւ ձայն ունի և երգում է գեղեցիկ:
Թիֆլիսի հասարակութիւնը հ. Կոմիտասի
համերգից կը ստանայ այնպիսի գեղարուեստ-
կան բաւականութիւն, որպիսին երբեք մինչև
այժմ չէ ստացել հայկական համերգներից, ու-
րովհետև հ. Կոմիտասի ներդաշնակութիւնը վե-
րին աստիճանի շնորհ է և գեղեցիկ, իսկ խում-
բը լաւ պատրաստված է գիտար կտորներ
կատարելու:

Ստ. Մ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱՇՏՆՈՒԹԻՒՆ

(Բարեկտի ընդ Աշխարհ գրաման հայկական բեմի
վրա—ներկայացում Ալեքսանդրովում)

I

Երեւոյթի, մարտի 29-ին, հայոց դրամա-
տիկական ընկերութեան խումբը օր. Արամեա-
նի նպատակն խաղաց Բարեկտի ընդ Աշխարհ
դրաման 4 գործողութեամբ և 7 պատկերով:

Օրորդ Արամեան, որ կատարում էր Մեր-
ցիայի դերը, այս անգամ էլ, իր բնեկեղծ
օրը, ցոյց տուց, որ նա բարեկեղծ դերասա-
նուէր է, սկսելով է իր դերը, ուսումնասիրում
է աղբը, զետեղում է թէ ինչպէս են խաղում
ուրիշ բեմերում: Նրա ներկայացրած ըրեստո-
նեայ աղիւղի իսկապէս այն հեղ, անձուէր,
անմեղ և չքնաղ կոյսն էր, որ ծրագրել է հե-
ղինալը: Յանկալի էր միայն, որ վերջին
տեսարանի մէջ, երբ Մերցիան համոզում է
Մարկին դառնալու ըրեստոնեայ և պատասխա-
վում է նահատակութեան, խօսքերը արտասան-
վելին աւելի ոգևորված, աւելի հոգեզայլ, ա-
ւելի պաթոսական, աւելի յուզված և ուժեղ
կերպով: Արամեան ստացաւ պատկեր և ըն-
ծաներ:

Տիկին Մայսուրեան խելացի կատարեց Վե-
րօնիկայի դերը, հետաքրքրական արտայայ-
տութիւն տալով հոռետեղական պատրիկուհու
տիպին: Մայսուրեանի Վերօնիկան իր շրջանին
յատուկ հասկացողութիւններով իր սիրող
գեղմուէրներով յարուցանում է կարեկցութիւն
մի որոշ չափով դէպի այդ կինը: Նա ներկա-
յանում է հանդիսականին առաջ ոչ միայն գե-
ղուհի, ոչ միայն պէճաբներով դրողված մի
թեթեւօրէկ, այլ և որոշ տիպի հոռետեղական
աղմուստոմբի իր առանձին ճաշակով և հայ-
եացեցով դէպի կեանքը: Սակայն Մայսուրեա-
նի Վերօնիկան չափազանց թախծալից և
մտադրող կին էր:

Տիկին Ջարիֆեան Պօպէա Թագուհու փոք-
րիկ լուր բաւարար էր, արտասանում էր
պարզ, որոշ: Նա աշող և ընտրող կերպով էր
արտայայտում բացառական իր վճիռը Մարկի
վերաբերմամբ: Տիկիններ Միլիքեան, Նոնիկ-
եան, Վարդուհի, Ջաբէլ, Ազիւր, նպաստում
էին անասմբելին: Բաւական աշող էր օր. Ա-
րամեան ժամուկ Լուցիոսի դերում:

Արամեան Մարկի մեծ և դժուար դերում ա-
շող էր ընդհանրապէս, բայց փոքր ինչ յոգ-
նածի տպաւորութիւն էր գործում: Մար-
կի տիպի մէջ սկզբում պէտք էր ցոյց տալ
հոռետեղական բօն-վիլանին մի որոշ գիծ. իսկ
Արամեանի Մարկի սկզբից մինչև վերջ չափա-
զանց լուրջ էր:

Պատրաստան Ներօնի դերում աշողութեամբ
հանդէս էր բերում Ներօնի թուլութիւնները և
նրա գաղափային ու մեղի խառն բնաւորութեան
էութիւնը, բայց չէր տալիս Ներօնի անձին այն-
պիսի մի գիծ, որ ցոյց տար թէ ինչպէս էին
նրանից դուրս գալու բոլորը: Ջարիֆեան Տիգրի-
նի դերում էր և մի բանի տեղերում շատ բա-
ւարար աշող: Աւետեան Գլաբրիոսի դերում
ընտրող էր: Միւս գերակատարները նպաստում
էին անասմբելին:

Սիրող

II

Ալեքսանդր Բաբայան, կրթական, մարտի 27-ին, լինել արձակ, ազատ, լաց լինել իր ձայնը ժողովրդական տանը՝ ղեկավարութեամբ դերասան Արմենյանի և մասնակցութեամբ տիկ. Դուրանի Արմենյանի ու տեղական սիրողներին՝ դերասան Խաթակի Բենեֆիսին ներկայացրին Օստրովսկու պիեսին «Անմոլ յանցաւորներ» կամ 4 դրոնդը։

Դերակատարներից բացի տիկ. Դուրանից և սիրող Ստաշեանից, ոչ ոք կատարելապէս իր դերուը չէր։ Չափազանց երկար անտրակտները շատ ձանձրալի էին։ Համեմատաբար աւելի աշող անցաւ վերջին գործողութիւնը, որ տեղ տիկ. Դուրանի ընտանիքը տարաւ իր դերը մեծ ոգևորութեամբ, արժանանալով բուն ծափահարութիւններին։ Թող ներքին մեղ ասել, որ դերասանները աշխատել էլ ուշը չեն դարձնում պիեսներին ընտրութեան, այլ տալիս են այնպիսի ներկայացումներ, որոնք մեղ, ալեքսանդր Բաբայանի համար դեռ անմատչելի են։ Ներկայացումը վերջացաւ շատ ուշ՝ այն է 11/3 ժամին։ Հասարակութիւնից մի քանիսը կիսատ թողին ու հեռացան։ Դանիշը համարեալ թէ լինել էր։

Կ. Կարապետեանց

ՆԱՄԱԿ ԳՈՆԶՈՒԹՅՈՒՆ

Մարտի 23-ին

Անցեալ փետրվարին ու ներկայ մարտին Գրանձակի ստորին ու միջնակարգ դպրոցներում, արական ու իգական, կայացան մի շարք ծնողական ժողովներ, դպրոցական մանկապարտեզներում և մարմնակրթական հետ խառն ու առանձին ժողովները բաղմամբ էին, բազմապիսի հարցեր։ Այդ ժողովները նշանաւոր չափով կենդանացրին ու թարմացրին մեր թերթի հասարակական կեանքը, զարթոյցին հասարակական միտքը, մեր հասարակութեան համար նշանակալի, նկատելի դարձրին այնպիսի հասարակական, ընդհանրական իրաւունքներ, որոնց մասին այժմ խօսում և ամբողջ մտածող Ռուսաստանը և որոնց իրագործման պաշտօնական ուղին ամենահեղինակաւոր մասնացոյց է արված արդէն Գրանձակի թերթերում։ Լայն հասարակական գործունէութեան համար անպատրաստ մեր հասարակութեան համար այդպիսի ժողովների միջոցով միայն կարող է ընտելանալ այն գործունէութեան, որը անհրաժեշտ է ընդհանրական առաջադիմութեան համար, կեանքի աննպատակաւոր հնացած պայմանների բարեփոխման ու բարեկարգման համար, բարեկարգման, որի անհրաժեշտութիւնը ճանաչում, ընդունում են այժմ թէ պաշտօնական և թէ ոչ պաշտօնական շրջանները։ Հասարակութիւնը հասարակական գործունէութեան համար նախապատրաստող, դաստիարակող օրինաւոր ժողովները, այս կամ այն առիթով գումարավոր, այս կամ այն հարցը, երկույթը քննելու համար, ցանկալի է, որ յաճախակի տեղի ունենան ու բաղմամբ լինեն։ Դպրոցը, պաշտօնական հիմնարկութիւնը, հրաւիրում է ծնողներին ժողովի շատերը թէ և բուն հետաքրքրութեամբ արձագանք են տալիս հրաւերին, բայց կան և այնպիսիները, որոնք անտարբեր են գտնվում ղեկի արձագանքող հարցերը, չեն յաճախում ժողովները, ասիական սիրտ ստացող անտարբերութիւնից ձեռք չեն վերցնում։ Անտարբերութիւնը ղեկի հասարակական գործերը դատապարտելի է անչափ, իսկ այնպիսի մի նշանաւոր մոմենտում, ինչպիսին է ներկան, երբ Գրանձակի բարձրագոյն ընդհանուր հոգ, մտածող տարրերը հրաւիրվում են լայն հասարակական գործունէութեան, այդ անտարբերութիւնը յանցանք է ուղղակի։ Առանձնապէս ասելով՝ «մինչև երբեք» լաց չէ լինում, մայրը ծիծ է տալիս։ Տարինը շարունակ յայտնի երեխան այնչափ անարեւելի է եղել, որ յաճախակի մնացել է սոված ու չէ յանդգնել լաց լինել։ Այժմ թեթեւացում, վերացում են նրան կաշկանդող, նրան անարեւելի պայմանները։ Նրան հնարաւորութիւն են տալիս անարգել լաց լինել, ծիծ պահանջել, կենսատու կաթ խնդրել, բայց նա մեղանում, մեր ծախքները այնքան խորն է կրում իր սրտի ու մտքի, իր հոգու վրա

հաւանական հետքերը, որ չէ յանդգնում լաց լինել արձակ, ազատ, լաց լինել իր ձայնը...

Մեր դպրոցներում տեղի ունեցած ժողովներում արձագանքներն հասարակական առաջնակարգ նշանակութիւն ունեցող մի շարք հարցեր, նրանցից երկուսը պարզվել են այնչափ, որ հնարաւոր է համարվում նրանց իրագործութեամբ ապագայ ուսումնարանական տարվայ սկզբից։ այդ հարցերից առաջինն է մայրերի լեզու ու գրականութեան կանոնաւոր, լուրջ պահանջները։ Դաստիարակութեան հարցը բոլոր դպրոցներում, երկրորդն է՝ դպրոցների ու հասարակութեան մէջ կենդանի կապի հաստատման հարցը յանձնին հասարակութիւնից, ծնողների կողմից ընտրված ներկայացուցիչներին, կրթական դաստիարակչական գործին ձեռնհաս հոգաբարձուներին։ Մայրերի լեզուն պէտք է դասախօսվի լայն ծրագրով, այլ ոչ այնպիսի խզուկ, ինչպիսին է գոյութիւն ունեցող պաշտօնական ծրագիրը։ մայրերի գրականութիւնը բոլորովին նոր բան է, ինչու դպրոցներում (միջնակարգ ու քաղաքային) ու դասախօսվելու է բարձր դասարաններում։ Սովորում է նաև մայրերին պատմութեան ու աշխարհագրութեան պատմադրի դասաւորութեան մասին։ այդ հարցը մանրակրթիկ ընդհանրութեան դեռ չէ ենթարկվել։ Ապացոյցների կարօտ չէ այն տարրական ճշմարտութիւնը, որ այդ առարկաները անհրաժեշտ ու անչափ օգտակար են ընդհանուր կրթութեան ստացող մատղայ սերունդին։ մայրերի լեզուն, գրականութիւնը, պատմութիւնը ու աշխարհագրութիւնը այն առարկաներն են, որոնք կարող են մեր մատղայ սերունդին ընդհանուր կրթութիւնը աւելի ընդլայնել ու բազմակողմանի դարձնել, հետեւաբար և աւելի աղբիւրակ հասարակութեան համար։

Գրանձակի քաղաքային դպրոցի աշակերտների ծնողներին կողմից ընտրված յանձնաժողովը, բաղմամբ դպրոցի ուսուցչական խմբից ու մի քանի տեղացի հայ ու թուրք խնայելի, զենաներից, որոնք է աւելացնել տեղական լեզուների դասերի թիւը յիշեալ դպրոցի բոլոր դասարաններում, աւելացնել վարձատրութիւնը այդ դասերի համար ու այդպիսով ձեռնհաս ուսուցիչներին գրաւել ղեկի լեզուների դասաւորութիւնը։ բացի այդ՝ յանձնաժողովը որոշել է, որ ապագայում ծնողների ներկայացուցիչները մասնակցեն մանկավարժական խորհրդի նիստերին ու նրա հետ միասին ընդհանրական կրթական-դաստիարակչական հարցեր և թէ դպրոցական-տնտեսական։ Յանձնաժողովը իր այդ որոշումները մասին կազմել է մանրամասն արձանագրութիւն, որն ուղարկել է ուսումնարանական բարձր իշխանութեան հաստատելու համար։ Միւս դպրոցներում էլ մտնում են այդ և ուրիշ հարցերի լուծման։ Բոլոր ժողովներում ու յանձնաժողովներում հայ ու թուրք խնայելիներն միշտ աչքի է ընկել իր համերաշխութեամբ։ ցանկալի է, որ այդ համերաշխութիւնը զնալով աւելի ու աւելի ամրապնդվէ։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մարտի 23-ին

Հեռագրական գործակալութիւնը հաղորդեց, որ մեր կողմից մօլօկան ուսանողը գաղթում են Ամերիկա։ Այդ բանը նոր թիւն չէ։ այն օրից, երբ գաղթեցին Գուրգուր ուսանողը, շարժում նկատուցեց և մօլօկանների մէջ։ գիւղերում ժողովներ են կազմվել, նախագահել տին խորհրդներ էին տալիս։ Գրանձակից տոկոսով փող վերցրին, հարկերի համար ևս խնդրեցին, որ պակասեցնվեն։ ասում էին, որ հողը քիչ է, ժողովուրդը բազմացել է, և այնպիսի մի շարք բողոքագրեր միմեանց յաղորդում էին։ Ի հարկէ այն, ինչ որ հնարաւոր էր, կառավարութիւնը կատարում էր, իսկ այն ինչ որ անկարելի էր, մնում էր անհետեւանք։

Մրանից չորս տարի առաջ մի քանի գիւղեր միացած, մի աղերսագրով դիմեցին կառավարութեանը, որ թոյլատրվի իրանց գաղթել Ամերիկա։ Մրանց հետ միացած էին և մօտ 30 տուն հայեր, բացառապէս բողոքականները։ Պատասխանը ստացվեց. «մօլօկանների համար, որպէս ուսանողի մեթոդին, իսկ հայերին թոյլատրվում էր գաղթել, խոստանալով նրանց մի շարք գիւղերից»։

Մեր ժողովական պատասխան ասանալուց յետոյ մօլօկանները սկսեցին հատ-հատ գնալ Ամերիկա, և այժմ բոլորը վճռել են, ինչ էլ լինի, անպատճառ գաղթել։

Երբ հարց էք տալ նրան թէ ինչու վճռել են գաղթել, նրանք հետեւեալ պատճառներն են բերում. հողը մի և նոյնն է, իսկ իրանք շատացել են, արբունական և հողային հարկերը բառապատկեր են, այնպէս որ, առաջ մի գիւղ տալիս էր 200 ռուբլի, այժմ տալիս է մի հազար ռուբլի։ Ձեռներն երկար են և ծանր, կենդանիներն խոտը չէ բաւականանում։ Սաստիկ գանգատվում են անանաբոյժները, որոնք ահա երեք տարի է, որ շարունակ կոտորել են տալիս նոյն իսկ բոլորովին առողջ անասուններին, իսկ վերջին սուսկալի արիւնտ դրաման, որ կատարվեց Բագուում, վերին աստիճանի վրդովեցրել է նրանց։ Երկու են կրում, որ մի օր, մի օր և է ազգի կողմից կենթարկվին կոտորածին։ Մի մեծ տրտունջ էլ են անում, այն է, որ նրանք միշտ ֆորագոյններով ապրանքներ էին տեղափոխում թիֆլիսից, Գրանձակից, Երևանից, իսկ այժմ երկաթուղու գիծը. այդ արդիւնաւոր պարագային էլ դադարեցրեց։ Եւ իրաւ, համեմատելով նրանց դրութիւնը սրանից 10 տարի առաջ և այժմ, բոլորովին հակադասուելի է ներկայացնում. շատ հարուստներ աղքատացած, պարագերի մէջ ընկած, իսկ ընդհանրապէս համարեալ բոլորը բարոյապէս փչացած։ հարեցողութիւնը բուն է դրել. ստորացել են։ Եւ դա ցաւալի է, շատ ցաւալի։ Կար ժամանակ, երբ մեր գիւղացիները դրանցից օրինակ էին վերցնում և նախանձում էին. իսկ այժմ գոյուցի են դարձել։ Ինչպէս դուխոբօրներն, նոյնպէս և արանց գաղթելը մի մեծ հարուած է քաղաքիս առեւտրականների համար։

Մ. Ոսկանեան

ՆԱՄԱԿ ԳԵՕԿԶՈՒԹՅՈՒՆ

Մարտի 22-ին

Գիւօլչայ գիւղաբնակից գտնվում է անդր-կովկասեան երկաթուղու գծից 17 վերստ հեռավորութեան վրա։ Բնակիչներն են՝ հայեր, թուրքեր և ուսներ։ վերջինները պատկանում են չինովնիկական դասակարգին։ Երկու դասակարգիս պատկանող թուրքերը՝ սիւնիներն և շիրանները շատ ժամանակից ի վեր ունեն իրանց մզկիթները. ուսները, որոնց թիւը, բացի մի վաղ աղանդներից, հասնում է 15-ի, ունեն արթթատուն, իսկ հայերը, թիւով 100 տուն, չունեն ոչ եկեղեցի և ոչ էլ աղօթատուն։

Գիւղաբնակից նկարագրել հայերի դրութիւնը. մեծում են, առանց հաղորդութեան. ննջեցեալները մնում են անթաղ, օրերմ մինչև չորս օր, դէպք է եղել, որ ննջեցեալ են թաղել առանց քանանայի։

Հայկական գիւղերը գտնվում են 25—40 վերստ հեռավորութեան վրա և այդ գիւղերից մի քանիսում քանանները չը կան։ Ննջեցեալ աղգակները, մօտ 5 ռուբլի իրար ծախս են անում միայն քանանայ կանչելու համար. իսկ այդ գումարը աղքատ ընտանիքի համար շատ զգալի է։ Աւելի ցաւալի են այն դէպքերը, երբ ձիււր են ուղարկում գիւղը քանանայ բերելու, իսկ քանանան չէ գալիս, պատճառաբանելով թէ իր գիւղում ևս ննջեցեալ կայ և կամ իր վիճակը չէ Գիւօլչայը. այդպիսով ստիպված են լինում մի ուրիշ գիւղ մարդ ուղարկել, մինչև որ մի բարեխիղճ քանանայ է գտնվում և համաձայնվում է գալ։

Ընթերցողը անշուշտ հարց կը տայ, թէ ի՞նչու Գիւօլչայի հայ աղգաբնակիչները չէ ուղարկում արթթատուն շիրնի կամ սեփական քանանայ ունենալ։ Այս հարցին կը պատասխանեմ, որ Գիւօլչայի հայերը 15 տարուց ի վեր ամեն միջոցի դիմեցին, որ կառավարութիւնից իրաւունք ստանան եկեղեցի կառուցանելու, բայց մինչև այժմ նրանք ամեն անգամ մերժում են ստացել, այն պատճառով, որ հաստատված ծուխ չունեն։

Գիւօլչայի հայերը այժմ աշխատում են թոյլատրութիւն ստանալ աղթատուն և սեփական քանանայ ունենալու համար, (այս հարցը արդէն կառավարչապետի կարգադրութեան է ներկայացրած) բայց քանի որ տեղիս ժողովուրդը մէջ արդէն խռովութիւն է ընկել երեք անգամաւորութեան պատճառով, որոնք օգտվելով ժողովուրդի միամտութիւնից և անհասկացողութիւնից՝ իրանց անձնական թշնամութիւններն են առաջ ըջում հասարակական գործում, վախեցնում են, որ այս անգամ էլ անհասարակաւոր են իրենց կողմից, որոնք դատաստանական պայտիչ կը լինի խեղճ ժողովուրդի դրութիւնը...

Մարտի 19-ին տեղիս գերեզմանատանը (եկեղեցի չը լինելու պատճառով) ամբողջ հա-

սարակութեան ներկայութեամբ Կնչբուրդ գիւղի քանանայ կատարեց վաղաթաւամ, հասարակական գործիչ «մեր Գրիստափոր Միքայիլեանի» հողեհանգիստը։ Գրանձակի համառոտ կերպով ծանօթացրեց ժողովուրդին հանգուցեալի գործունէութեան հետ։

Մարտի 20-ն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՌՈՒԹԵԱՆ

Ալեքսանդր Բաբայան, մարտի 26-ին Սեպուհ պարտը եւ համարում իմ խնամքին յանձնված արհեստանոցի չբաւոր աշակերտներին կողմից յայտնել խորին շնորհակալութիւն, այն բոլոր սիրողներին, որոնց մասնակցութեամբ կայացաւ ներկայացում, յօգուտ արհեստանոցի չբաւոր աշակերտներին և այդ ներկայացումից զոյացած արդիւնքով հարաւոր եղաւ օգնութեան խնամ կարօտ աշակերտներին շրբի կարել։

Ալեքսանդր Բաբայան, քաղաքային կար ու ձեռք արհեստանոցի աւագ ուսուցչուհի՝

Շ. Նանգուլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաղորդում ենք թիֆլիսի գործակատարներին և առեւտրականներին մէջ կայացրած համաձայնութեան մանրամասնութիւնները. 1) Պարագլուխների ժամանակ առաւօտեան ժամ 8-ից մինչև երեկոյան ժամ 6-ը անընդհատ. ամեն մի գործակատար ճաշի համար ստանում է 1 ժամ. 2) առաջին անհրաժեշտութեան պիտոյներ ծախող մագաղանները կարող են բաց լինել ժամի 7-ից մինչև 7 ը. 3) առաւօտեան անկ առանց սակարկութեան, յաճախորդներին կանչելու սովորութիւնը թողնել և գործակատարներին առկոսներով վարձատրութիւն տալ վերացնել. 4) մի տարուց աւել ծառայած անձինք, երբ լուրջ կերպով հիւանդանում և գրկվում են իրանց պաշտօնը կատարելու կարողութիւնից, ստանում են մի ամսվայ առձիկ և տեղից չեն գրկվում. 3 տարի ծառայածները հիւանդութեան դէպքում ստանում են 2 ամսվայ առձիկ, իսկ 5 և աւել տարիներ ծառայածները—4 ամսվայ առձիկ. 5) մի տարուց ոչ պակաս ծառայած իւրաքանչիւր գործակատար տարվայ ընթացքում իւրաւունք ունի երկու շաբաթ արձակուրդ ստանալ, առանց ոտնձիգի գրկվելու. 6) առանց յարգելի պատճառների արձակված գործակատարը պիտի ստանայ վարձատրութիւն. եթէ մի տարուց պակաս է ծառայել—մի ամսվայ, եթէ մի տարուց աւել է ծառայել—երկու ամսվայ առձիկ. 7) ճաշի կամ ճաշի փողի հարցը պիտի վճեն իրանիս խառնութեամբ և գործակատարները փոխադարձ համաձայնութեամբ. 8) խառնութեամբ իրենց և գործակատարների փոխադարձ յարաբերութիւնները պիտի լինեն քաղաքավարի. 9) գործադուլ արած բոլոր գործակատարները պիտի ընդունվին նորից ծառայութեան մէջ և առձիկ ստանան գործադուլի օրերի համար։

Յայտնի է թէ դպրոցները մէջ որքան յաճախ փոփոխվում են դասագրքերը։ Իւրաքանչիւր ուսուցիչ իր ուղածին պէս կարգադրում է, և մի օր գնված դասագրքերը միւս օրն արդէն անպէտք է հրատարակում։ Ժողովրդական լուսաւորութեան միջոցաւ ուղղութիւն է դարձրել այս հանգամանքի վրա։ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն ստացել է միջոցաւ կարգադրութիւն, որի մէջ յայտնված է, թէ դեռ 1866 թականից անդադար կրկնվում է եղել պահպանել այնպիսի կանոններ դասագրքերի վերաբերմամբ, որ նրանք չը փոխվին երկու տարուց առաջ, որ փոփոխութիւնը որոշէ մանկավարժական ժողովը և ոչ թէ առանձին անհատ ուսուցիչը և փոփոխութեան մասին որոշում կայանայ անպատճառ մինչև ամառային արձակուրդները։ Այլ ինչու ունենալով, որ շատ հիմաւոր անյարմարութիւններ են առաջանում այդ կանոնները խտրութեամբ չը կատարելուց, միջոցաւ առաջարկում է կատարել կանոնները ճշգրտեալ։ Ամառային արձակուրդները սկզբին դպրոցներում պիտի կախված լինին ցուցակներ, թէ ինչ դասագրքեր են հարկաւոր առաջիկայ տարին։

Ապրիլի 1-ին կառավարիչ սենատի քրէական դեպարտամէնտում պիտի ընկնի 25 հաւելի գործը, որոնք դատաստանական պայտիչ կը լինի խեղճ ժողովուրդի դրութիւնը... Մարտի 19-ին տեղիս գերեզմանատանը (եկեղեցի չը լինելու պատճառով) ամբողջ հա-

Редакционно-издательский типграфический Т-ва Гермесъ. Мал. ул. №15